ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

27.09.2021թ.
ժամը 14^{30}

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումն իրականացվել է 24-ը սեպտեմբերի 2021թ. ժամը 10^{00}-ին ՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Հանձնաժողովը մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո շարունակեց աշխատանքները:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի պետ Ա. Նազարյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչության ՆՏԱ բաժնի պետ բ/ծ գնդապետ Կ. Խաչունցը,

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյանը,

ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչության ՆՏԱ բաժնի սպա բ/ծ մայոր Մ. Գալստյանը,

Գնումները համակարգող

ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Լ. Թազայան

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ. Թազայան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Լ. Թազայան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Բժշկական սարքավորումների վերանորոգման ծառայության» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1.	«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
2.	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/32» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Լ. Թազայան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքի.

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար՝ ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

ներկայացված լիազորագրում սխալ է նշված սույն գնման ընթացակարգի ծածկագիրը:

2.4 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 27.09.2021թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց վերոնշյալ մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

2.5 29.09.2021թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում *«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի* կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Լ. Թազայան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակը	Նախահաշվային գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների				
					Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	STERRAD-100S ցածր ջերմաստիճանային պլազմային ստերիլիզատորի տեխնիկական սպասարկում	հատ	1	4,584,000	1	«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ	1,805,000	361,000	2,166,000
2	STERRAD-NX ցածր ջերմաստիճանային պլազմային ստերիլիզատորի տեխնիկական սպասարկում	հատ	1	4,800,000	1	«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ	2,165,625	433,125	2,598,750
3	Toshiba Aquilion CXL համակարգչային շերտագրի տեխնիկական սպասարկում	հատ	1	4,800,000	1	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ	4,000,000	800,000	4,800,000
4	Aplio 400 Ուլտրաձայնային սարքավորման սնուցման վերանորոգում	հատ	1	5,700,000	1	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ	5,700,000	1,140,000	6,840,000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Ըստ ներկայացված տվյալների՝ մասնակիցները համարվում են ԱԱՀ վճարողներ:

3.4 Քանի որ ՀՀ ՊՆ կարիքների համար *«Բժշկական սարքավորումների վերանորոգման ծառայության»* ձեռքբերման համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հրավերի պահանջներին համապատասխան գնահատված հայտ ներկայացրած մասնակիցները հանդիսանում են որպես միակ մասնակից, իսկ 4-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից առաջարկված գինը գերազանցում է պատվիրատուի՝ տվյալ գնումների համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը գների նվազեցման նպատակով **04.10.2021թ. ժամը 15:00-ին** ՀՀ ՊՆ գնումների

կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում) որոշեց ընտրված մասնակիցներին որոշելու նպատակով առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների՝ («Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի) հետ կազմակերպել միաժամանակյա բանակցություններ:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը՝ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին էլեկտրոնային եղանակով միաժամանակ ծանուցեց նշված բանակցության վարման օրվա, ժամի և վայրի մասին:

04.10.2021թ. ժամը 15:00-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցությանը մասնակցելու համար ծանուցված մասնակիցներից ներկայացել են «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի տնօրենի կողմից լիազորված անձինք՝ Տիգրան Ավետիսյանը և Զառա Սարգսյանը, ովքեր բանակցության արդյունքում համաձայնվեցին նվազեցնել առաջարկված գնային առաջարկը ներքոհիշյալ չափաբաժնի մասով՝ սահմանելով հետևյալ գինը.

4-րդ չափաբաժնի մասով առաջարկված 6,840,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամի փոխարեն՝ 5,700,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ,

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից որևէ մեկը չներկայացավ, ուստի մասնակցի կողմից հայտով առաջարկված գները մնացին առանց փոփոխության, քանի որ մասնակցի կողմից առաջարկված գները չէր գերազանցում պատվիրատուի՝ տվյալ գնումների համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի (1-ին և 2-րդ չափաբաժինների մասով) և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի (3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով) տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Լ. Թազայան)

4.1 05.10.2021թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակիցներ ճանաչել հետևյալ մասնակիցներին. ***տես Հավելված 1***

Հավելված 1

Հ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակը	Նախահաշվային գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների					Ընտրված մասնակցի անվանումը
					Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/			
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին	
1	STERRAD-100S ցածր ջերմաստիճանային պլազմային ստերիլիզատորի տեխնիկական սպասարկում	հատ	1	4,584,000	1	«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ	1,805,000	361,000	2,166,000	«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
2	STERRAD-NX ցածր ջերմաստիճանային պլազմային ստերիլիզատորի տեխնիկական սպասարկում	հատ	1	4,800,000	1	«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ	2,165,625	433,125	2,598,750	«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
3	Toshiba Aquilion CXL համակարգչային շերտագրի տեխնիկական սպասարկում	հատ	1	4,800,000	1	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ	4,000,000	800,000	4,800,000	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
4	Aplio 400 Ուլտրաձայնային սարքավորման սնուցման վերանորոգում	հատ	1	5,700,000	1	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ	4,750,000	950,000	5,700,000	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Սույն ընթացակարգի շրջանակում անգործության ժամկետ չի կիրառվել, քանի որ յուրաքանչյուր չափաբաժնի համար հայտ էր ներկայացրել միայն մեկ մասնակից:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Լ. Թազայան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Լ. Թազայան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Կ. Խաչունց
Գնահատող	Հ. Ավետիսյան
Գնահատող	Մ. Գալստյան
Գնումները համակարգող	Լ. Թազայան